

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Անուշ Բարսեղի Բարսեղյանի «Վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման համուղղումը դեղատանը թեմայով ատենախոսության վերաբերյալ որը ներկայացված է ԺԵ.00.01 «Դեղագիտություն և մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը

Ներկայացված ատենախոսական աշխատանքը չափազանց արդիական է և ունի բացառիկ կարևորություն մեր հանրապետության համար: Բավական է հիշատակել, որ համաձայն Եվրոպական մոտեցման «դեղագետը դա փոսրձագետ է բժշկի և բուժառուի միջև», ասել է թե սա այն վերջին և պատասխանատու ֆիլտրն է, որը վերջնականացնում և իրականացնում է դեղն ընդունելու մասին որոշումը: Այս ամենը մատնանշում է, թե ինչքան մեծ և կարևոր պատասխանատվություն է ենթադրում դեղագետի մասնագիտությունը և եթե դեղատոմսով դուրսգրվող դեղերի դեպքում դեղագետը «ապահովագրված է բժշկի որոշմամբ, ունի հետադարձ կապի հնարավորություն նրա հետ, ապա ինքնաբուժման պարագայում դեղի պատշաճ կիրառման համուղղուման հարցում մեծանում է դեղագետի կարևորությունն ու պատասխանատվությունը: Ընդ որում դեղագետի դերն ու նշանակությունը այս ոլորտում օրեցօր ավելի է ընդլայնվում, քանի որ բժիշկ-բուժառու-դեղագետ համակարգում, որն իրականացնում է համապատասխանաբար բուժում-ինքնաբուժում-դեղագործական հոգածություն գործընթացները, ներկայիս տեղեկատվական դաշտի և արհեստական բանականության հնարավորությունների պայմաններում ինքնաբուժման մասնաբաժինը անընդհատ աճում է: Այս ամենը հատկապես նշանակալից է Հայաստանում, որտեղ սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով բուժառուները ավելի հաճախ են դիմում ինքնաբուժմանը:

Ատենախոսական աշխատանքը, որը շարադրված է 153 տպագիր էջով, ձևակերպված է համաձայն ԲԿԳԿ-ի կողմից սահմանված պահանջների, ներառելով ներածություն, գրականական ակնարկ, հետազոտության նյութը և մեթոդները, իրականացված

հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը, ներդրված պիլոտային հետազոտությունը, եզրակացությունները, 181 սկզբնաղբյուր ներառող գրականության ցանկ և 4 հավելվածներ: Աշխատանքը ներկայացված է 19 աղյուսակներով և 35 նկարներով:

Հայցորդը միանգամայն համոզեցուցիչ և հիմնավոր հաստատել է իրականացված հետազոտության արդիականությունն ու դեղագետի կարևորությունը բուժառույի պատասխանատու ինքնաբուժման ժամանակ ակնկալվող վտանգների հնարավոր շրջանցման և կանխման հարցում: Ելնելով դրանից նպատակ է դրվել ուսումնասիրել և գնահատել վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման իրավիճակը ՀՀ-ում և մշակել ինքնաբուժման պատշաճ համուղղման համար համապատասխան ծրագիր: Դրված նպատակը իրականացվել է, քանի որ հստակ սահմանվել և կատարվել են այնպիսի կարևոր խնդիրներ ինչպիսիք են դեղատան մասնագետ աշխատակիցների գիտելիքների և հմտությունների գնահատումը, տեղեկատվական գիտելիքներ ապահովող աղբյուրների վերահսկումը, դեղատանը իրականացվող և սպառողներին մատուցվող ծառայություններով բուժառուների բավարարվածության գնահատումը ուսումնասիրվող ախտանիշների ինքնաբուժման պարագայում: Նախատեսվել էր նաև մշակել գիտականորեն հիմնավորված միջոցառումների և ծրագրերի համալիր՝ ուղղված դեղատան աշխատակիցների կողմից ինքնաբուժման գործընթացի համուղղմանը և ոչ ադեկվատ ինքնաբուժման անցանկալի հետևանքների նվազեցմանը:

Առաջ քաշված խնդիրներից ակնկալվող արդյունքները վստահելի և արժանահավատ գնահատելու հնարավորությունը ապահովել են հեղինակի կողմից ճիշտ մշակված մեթոդաբանությունը և վալիդացված վիճակագրական հայտնի փաթեթների և հետազոտական մեթոդների կիրառումը: Հետազոտությունն ներառել է քանակական և որակական մեթոդներ: Քանակական փուլում անցկացվել է հարցաթերթիկային հարցում՝ 1308 սպառողների և 597 դեղատան աշխատակիցների շրջանում՝ պատահական ընտրությամբ: Հարցաթերթիկները կազմվել են ԱՀԿ չափորոշիչներին բավարարող հարցաշարերի հիման վրա: Ստացված տվյալների վերլուծությունն իրականացվել է SPSS 2023 ծրագրով: Որակական հետազոտության

շրջանակներում կազմակերպվել են վեց ֆոկուս խմբեր՝ ընդհանուր 60 մասնակցով: Քննարկումներն անցկացվել են նախապես կազմված և թեմատիկ ուղղությամբ մշակված հարցաշարի հիման վրա՝ նպատակ ունենալով հավաքագրել սպառողների ինքնաբուժման փորձի, մոտեցումների և տեղեկացվածության վերաբերյալ կարևոր տվյալներ:

Գրականության ակնարկում հայցորդի կողմից ներկայացված է առաջ քաշված պրոբլեմի վիճակը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների օրինակով՝ հիմնվելով բավական լայնածավալ ժամանակակից գրականության գիտական աղբյուրների վրա: Այն կարդացվում է շատ հեշտ և մեծ հետաքրքրությամբ, ինչը վկայում է Բարսեղյան Անուշի թե խորը գիտելիքների, թե մասնագիտական բարձր պատրաստվածության և թե նրա գիտական հարցերում ճիշտ կողնորոշվելու և հստակ ներկայացնելու ունակությունների մասին:

Ստացված արդյունքները, աշխատանքի գիտական նորույթ և գործնական նշանակությունը: Հետազոտության մասնակիցների շրջանում իրականացված հարցախույզի արդյունքները վկայում են, որ ինքնաբուժման գործընթացը բավական տարածված է՝ հաճախ հիմնված լինելով ինքնախտորոշման և ոչ վստահելի աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա (57,4%)՝ անտեսելով դեղատան աշխատակիցների մասնագիտական կարծիքը: Եվ դրա արդյունքում վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների 65,1% և գլխացավի 55,1% դեպքում իրականացվող ինքնաբուժումը իրականացվում է ոչ պատշաճ առանց դեղագետի մասնակցության: Ուսումնասիրության արդյունքները մատնանշում են, որ բուժառուների բավական զգալի մասը չեն դիտարկում դեղագետ/դեղագործներին որպես բավականաչափ վստահելի խորհրդատուներ կամ ինքնաբուժման գործընթացը համուղղող մասնագետներ: Ըստ սպառողների կարծիքի ինչպես նաև համաձայն դեղատան մասնագետ աշխատակիցների հետ իրականացված հարցախույզերի դեղագետ/դեղագործները բավական հաճախ ակնհայտ թերանում է ինքնաբուժման գործընթացի համուղղման մեջ, բավականաչափ չի կոմնորոշվում վտանգավոր կարմիր դրոշներ հանդիսացող ախտանիշների բացահայտման հարցում և ունի անհրաժեշտ գիտելիքների և գործնական հմտությունների բարելավման կարիքը: Այս եզրահանգումը ատենախոսը հիմնավորել է այն փաստով, որ դեղագետների ընդամենը 15,3%-ն է նշել, որ օգտվում է մասնագիտական աղբյուրներից գիտելիքները

համալրելու համար: Առկա բացը գրագետ լրացնելու համար հայցորդը կարևորում է դեղագետի դերը նաև որպես ինքնաբուժման գործընթացը ճիշտ և անվտանգ համուղղող մասնագետների հիմնավորելու և հստակ ձևակերպելու անհրաժեշտությունը, ինչը ճիշտ կուղղորդի նաև դեղագետ/դեղագործների հիմնական և շարունակական կրթության մեջ անհրաժեշտ բարեփոխումները՝ հատկապես բուժառուի հետ հաղորդակցման, դեղագործական հոգածության և ինքնաբուժման մասնագիտական կարգավորման ոլորտներում:

Ինչ խոսք բուժառուի ինքնաբուժման հաջողված ուղորդման գրավականը անկասկած դեղագետի և բուժառուի միջև հետադարձ կապի առկայությունն է: Ավախ, ինչպես վկայում են հետազոտության արդյունքները այն բավական թույլ է և դեղատան աշխատակիցների 47,4%-ը հետադարձ կապ չի պահպանում սպառողների հետ և չի հետաքրքրվում ինքնաբուժմանը իր կողմից հատկացված խորհրդատվության արդյունավետությամբ:

Այսպիսով վերը նշվածը վկայում է, որ ատենախոսի կողմից բացահայտված են վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման թերացումները, որոնց վերացման և ինքնաբուժման գործընթացը գրագետ կազմակերպման ուղիներից հեղինակը կարևորել և իրականացրել է սպառողների համար նախատեսված ուղեցույցի մշակումն ու փորձարկումը: Փորձարկման արդյունքները միանգամայն արդարացրել են հեղինակի սպասումները, ինչի մասին են վկայում թե սպառողների և թե դեղագետ/դեղագործների կողմից կիրառված ուղեցույցի մասին վերջիններիս ամփոփված կարծիքը, համաձայն որի այն անկասկած բարձրացնում է սպառողի իրազեկվածությունը, ծառայելով որպես օգտակար և հասանելի գործիք:

Հեղինակի կողմից ստացված հետազոտության արդյունքները հասանելի են ատենախոսության թեմայով տպագրված 10 գիտական հոդվածներով, որոնք ներառված են հեղինակավոր, այդ թվում նաև ազդեցության գործակից ունեցող, պարբերականներում:

Աշխատանքի հետ ծանոթանալիս առաջ ուշադրության առժանացան մի քանի հարցեր, որոնց մասին հետաքրքիր կլինեի լսել հայցորդի կարծիքը:

1. Համաձայն ստացված տվյալների ինքնաբուժումը իրականացվում է ոչ պատշաճ առանց դեղագետի մասնակցության վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների 65,1%-ի և գլխացավի 55,1%-ի դեպքում: Ինչով եք բացատրում, որ թվում է թե գլխացավի համախտանիշի հետ բուժառուն ավելի շատ է առնչվում, սակայն առանց դեղագետի ավելի շատ ինքնաբուժում է գրանցվում վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների դեպքում: Ինչպես կմեկնաբանեք այս փաստը:

2. Դուք նշում եք, որ դեղագետի հետադարձ կապը բուժառուի հետ թույլ է զարգացած: Այդ դեպքում դեղագետի մասնակցությունը բուժառուի ինքնաբուժման հարցում արդյոք կարելի է համարել որպես ինքնաբուժման կառավարում, ինչպես դուք եք նշում, թե սա ավելի շուտ ինքնաբուժման համուղղում է և ուղղորդում է:

3. Ձեր ուսումնասիրության արդյունքները մատնանշում են, որ բուժառուների բավական զգալի մասը չեն դիտարկում դեղագետ/դեղագործներին որպես բավականաչափ վստահելի խորհրդատուներ կամ ինքնաբուժման գործընթացը համուղղող մասնագետներ: Մինևույն ժամանակ եզրակացություններում նշված է, որ սպառողները հիմնականում գոհ և բավարարված են դեղագետ/դեղագործի մատուցած ծառայությունից:

4. Կատարված հետազոտության մեծ արժանիք էմ համարում այն փաստը, որ հայցորդը սպառողների հետ իրականացրած հարցախույզերում ներգրավել է ոչ միայն Երևան քաղաքի, այլ և մարզերի բուժառուներին: Ցանկության կարգով կուզենայի առաջարկել հետագա ուսումնասիրություններում դեղագետների հետ անցկացվող հարցախույզերում ևս ներառել մարզերի դեղատան մասնագետներին:

5. Բարձր գնահատականի է արժանի այն փաստը, որ հետազոտողը ինքնաբուժման գործընթացի թերացումների բացահայտման նպատակով իրականացված հարցախույզերի արդյունքները վերլուծելիս առանձնացրել է հարցվողների կրթական մակարդակը, տարքը և աշխատանքային փորձառությունը, սակայն եզրահանգումները կատարված են ընհանուր բոլոր խմբերի համար միասին: Ցանկալի կլիներ հետագա ուսումնասիրություններում բացահայտել առանձին գործոնների ազդեցությունը ինքնաբուժման գործընթացի վրա, ինչը

ավելի հստակ կուրվագծի անհրաժեշտ միջոցառումների կանխատեսումն ու կիրառման արդյունավետությունը:

Եզրակացություն

Անուշ Բարսեղի Բարսեղյանի «Վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման համուղղումը դեղատանը» թեմայով ատենախոսությունը իր արդիականությամբ, բնակչությանը առողջապահական անվտանգ ծառայություն ապահովելու մեծ նշանակությամբ, ստացված տվյալների նորույթով և դրանց իրականացման արդյունքում ապացուցված գործնական կիրառման արդյունավետությամբ միանգամայն համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությանը առաջ քաշվող պահանջներին, իսկ հայցորդը միանգամայն արժանի է դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդիմախոս

ԵՊԲՀ ֆարմակոլոգիայի

ամբիոնի վարիչ՝



պրոֆ Մ. Գ. Բալասանյան

Պրոֆ Մ. Գ. Բալասանյանի ստորագրությունը

հաստատում եմ, Մ. Հերացու անվան

ԵՊԲՀ գիտական քարտուղար, Բ. Գ. Ղ.



պրոֆ. Ս. Գ. Ավագյան

13.06.25թ.